Հոռոմ

Վարչական ղեկավար՝ Գուրգեն Սարգսյան

Հեռ: 077 45 52 62

Մակերես՝ 29.8կմ^2

Բնակչություն՝ 2100

Ինդեքս՝ 3015

horom2013@mail.ru

Հոռոմ, գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 9,7 կմ, իսկ գյումրուց՝ 19 կմ հարավ, Մանթաշ գետի ձախ և աջ ափին: Գտնվում է Երևան-Գյումրի ավտոմայրուղու մոտ, շրջապատված արգավանդ հանդամասերով: Տները տուֆակերտ են, թեք տանիքով ու հարմարավետ: Խմելու ջուրը բերված է մոտ 20 կմ հեռավորությունից: Կլիման ցուրտ է: Գյուղում կան դեկորատիվ ու մրգատու ծառեր: Նախնիների մի մասը եկել է 1829-1830 թվականներին՝ Կարսից և Արևմտյան Հայաստանի տարբեր տեղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ: Ունի բազալտի պաշարներ: Հոռոմում՝ բլուրների վրա, գտնվում է «Արծնաբերդ» Կիկլոպյան ամրոցը (տեղացիների կոչմամբ՝ Ղալաչի), բարձունքների և լեռնալանջերի վրա նշմարվում են բնակարանների հետքեր: Այստեղ պեղումներ են կատարել Թորոս Թորամանյանը (1914 թ.- ին), Բ. Պիստրովսկին, Ա. Աջյանը, Լ. Գյուզալյանը (1930 թ.-ին): Հոռոմում և շրջակայքում կան հին գերեզմաններ, դամբարաններ: Հոռոմն ունի սուրբ Հռիփսիմե (1861) և սուրբ Աստվածածին (1868 թ.) եկեղեցիներ, XII-XIII դդ. «Թուխ

Մանուկ» մատուռ: Այստեղ է ծնվել Սովետական Միության հերոս, փոխգնդապետ Վ. Օգանեսովը (Հովհաննիսյան), Սովետական Միության հերոս, երկաթուղային Թ. Պողոսյանյ, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Վ. Աբգարյանը (1920): Ինչպես նաև՝ Գևորգ Գասպարյանը Էդուարդ Մնոյանը Էդուարդ Հարոյանը Տիգրան Պողոսյան Թորգոմ Պողոսյան Արտակ Բիշարյան Արթուր Դավթյան Գոյություն ունի անվանման ծագման երկու ավանդություն:

Անիի թագավորի Հռիփսիմե անունով աղջիկը ժամանակին եկել է այստեղ ամառանոց: Ղալաչի լեռան վրա նա հիմնել է մի փոքրիկ ամրոց: Այդ աղջկա անունով գյուղը կոչվել է Հոռոմ՝ Հռիփսիմե: Պարսկաստանում ապրող մի հռոմեացի ժամանակին եկել է այստեղ, գյուղ հիմնել, որը նրա անունով կոչվել է Հոռոմ: Հոռոմը նախկինում եղել է հին քաղաքատեղի:

Պատմամշակութային ամենաարժեքավոր հուշարձանը Հոռոմ գյուղի հյուսիս-արևելյան կողմում գտնվող Ք. ա. 3-2 հազարամյակի ամրոցն է, որի շրջակայքում հայտնաբերվել է հիշյալ պատմական ժամանակաշրջանին վերագրվող դամբարանադաշտ:

Այս ավերակները հնում գյուղացիներն անվանել են Ղալաիչի (այսինքն՝ միջնաբերդ): Հոռոմից հյուսիս, հյուսիս-առևելք և հարավ-արևելք տարածվում է Ք. ա. 3-2 հազարամյակով թվագրվող «Հոռոմ» քաղաքատեղին:

Այն հարուստ է եզակի հուշարձաններով, որոնցից հատկապես հիշատակելի է Ք.ա. 2 հազարամյակի զոհարանը՝ սրբատաշ քարերով, ուղղանկյուն հատակագծով շինությունը և ցորենի վարանդը (Ք. ա. 3-2 հազարամյակ): Հոռոմ քաղաքը և բերդաքաղաքը զբաղեցնում են մոտ 4 քառ. կմ ընդարձակ տարածություն: Քաղաքատեղին կառուցված է եղել գյուղին մոտ գտնվող բարձր բլուրի վրա: Բլրի գագաթը իր անհավասար մակերևույթով և ընդարձակ տարածությամբ ամենևին չի խանգարել ունենալու բնակիչների հոծ բազմություն: Քաղաքատեղիի որոշ փողոցներ ունեցել են մինչև 6 մետր լայնություն, իսկ բնակարանների հիմքերը կառուցվել են միմյանց շատ մոտ: Այն ամբողջովին շրջապատված է եղել մեծազանգված որձաքար պարիսպներով՝ առանց շաղախի: Իսկ քաղաքատեղին զանազան պարիսպներով բաժանված է եղել քաղաքամասերի, որոնց պատերը նույնպես կառուցվել են որձաքարի մեծամեծ զանգվածներով: Արտաքին շրջապատի պարիսպներն ունեցել են հսկայական քառակուսի բուրգեր, որոնք իրենց տեսքով հիշեցրել են քարերի կուտակումներ և ոչ թե շարքեր:

Գյուղի արևելյան կքղմում պահապնվել է մի շինության մնացորդ, որը թեև կառուցված է հին շրջանի շենքերի նման, բայց իր ձևով միանգամայն եզակի հատկությունների

մարմնավորում է: Շենքը գրավում է պարսպով շրջապատված մասի կենտրոնական հատվածը և հետաքրքրական է մի շարք տեսանկյուններից: Հատակագիծը շրջապատված է կիսաբոլորակ աբսիդով և վարդաձև է: Պատերը շարված են նախնական ձևի կիկլոպյան քարերով՝ արտաքուստ առանց նկատելի լինելու, ներքին երեսների վրա երևում է կրաշաղախ և կիսաբոլորակ աբսիդներից թվով ութը: Շենքն ավելի շատ աշտարակի տպավորություն է թողնում, քան այլ նպատակի համար նախատեսված շինություն: Պարսպից դուրս նկատելի է ընդարձակ հրապարակ. որի հատակը սալապատ է և այլ շինությունների հետքեր չկան: Այդ հրապարակի վրա կան միայն մեծամեծ ժայռեր, որոնց վրա փորագրված են խորհրդավոր նշանագրեր (հետևյալ ձևով՝ ՈՍՈ), որոնցից յուրաքանչյուրի երկարությունը հասնում է մինչև 50 սմ., իսկ խորություն ու լայնությունը՝ 4-5 սմ.: Հոռոմի նախնադարյան ավերակ քաղաքը թերևս միակն է, որն իր մեջ պահել է հնագույն քաղաքակրթության նմուշներ, և որի հատակագիծը այսօր էլ կարելի է ստանալ աննշան շեղումներով:

Ակնհայտ է, որ Հոռոմը որպես քաղաքատեղի ունեցել է լայն ու նեղ փողոցներ, հրապարակներ, մեծ ու փոքր հասարակական նշանակության շենքեր, և հատկապես արժանի է հիշատակման «քաղաքի գլխավոր դուռը»: Թ.Թորամանյանը նշում է . որ բոլոր նախնադարյան բերդաքաղաքների մեջ Հոռոմի բերդաքաղաքը միակն է թե իր մեծությամբ, թե բովանդակությամբ, « … և անկարելի է առանց ապշության դիտել, թե ինչպիսի մարդկային արտակարգ ուժ և միջոցներ են ի գործ դրել պարսպաքարերը միմյանց վրա բարձրացնելու համար»: https://hushardzan.am/archives/7417